**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ**
**ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ԲՄԾՁԲ-21-7/2-1**

ք. Երևան «07» 06 2021 թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ Ա.Սահակյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Լարս ՍՊԸ-ը, ի դեմս տնօրեն Ա.Պրազյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

**2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

**3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ**

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի

կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 121230000 (հարյուր քսանմեկ միլիոն երկու հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 2021թ դեկտեմբերի 24-ը:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն Պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

*Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:*

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի

ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **14 էջից**, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագով նախատեսված պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ պաշտպանության նախարարություն | Լարս ՍՊԸ |
| ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5 | ք. Երևան, Ն. Զարյան 24 |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հայբիզնեսբանկ ՓԲԸ |
| Հ/Հ 900011144079 | Հ/Հ 11500234795947 |
| ՀՎՀՀ 02522157 | ՀՎՀՀ 00118713 |
| ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ | տնօրեն |
| Մ. ՍԱՀԱԿՅԱՆ | Ա. ՊՐԱՉՅԱՆ |

**Հավելված N 1**
**ԲՄԾՁԲ-21-7/2-1 ծածկագրով**
**պայմանագրի**

2021թ. ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն» պետական հիմնարկում հանգստացող անձնակազմի

սննդի պատրաստման ծառայության

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

**Նախաճաշ**

| Հ/Հ | Կերակրատեսակ | Բաղադրություն | Մեկ անձի համար քաշ (գրամ) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|
| 1 | Հաց սև | ՀՍՏ 31-101 մինչև 500 գրամանոց կաղապարային, տեսակը՝ ռուսական բատոն, կտրտած՝ մինչև 50 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 2 | Հաց մատնաքաշ | ՀՍՏ 31-99 Ցորենի բարձր տեսակի ալյուրից պատրաստված մինչև 1 կգ-ոց, կտրտած՝ մինչև 150 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 3 | Լավաշ | ՀՍՏ 31-99: Ցորենի ալյուրից թողարկված կշռով և հատով, պատրաստված 1-ին տեսակի ալյուրից: Կտրտած 12*10սմ չափսերով՝ մինչև 50 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 4 | Շաքարավազ | ԳՕՍՏ 33222-2015 Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել: | ըստ պահանջի | Մատուցվում է սեղաններին շաքարամաններով |
| 5 | Կարագ սերուցքային | ԳՕՍՏ-32261-2013: Քաղցրասերուցքային, յուղայնությունը՝ 82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, մինչև 25 կգ գործարանային փաթեթներով, կտրտած՝ մինչև 15 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 6 | Պանիր | Տեխնիկական պայմանների համաձայն: Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: 5կգ-ոց գործարանային փաթեթավորմամբ, <<Լոռի>> տեսակի կամ համարժեք, կտրտած՝ մինչև 15 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 7 | Կաթ | ԳՕՍՏ-31450-2013: Տեխնիկական պայմանների համաձայն: Պաստերացված կովի կաթ 3 % յուղայնությամբ, թթվայնությունը՝ 16-21ՕՏ: 1լ.-ոց գործարանային փաթեթավորմամբ, օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի՝ համապատասխան տարաներում կամ ինքնաեռում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 8 | Մուրաբա | ԳՕՍՏ 7061-88: Թուզի,բալի և կեռասի ասորտի,պիտանելիության մնացորդային ժամկետը մատակարարման պահից ոչ պակաս քան 80 %, տարայավորված համապատասխան սպասքում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 9 | Ջեմ | ՀՍՏ 48-2007: Խնձորի, դեղձի և սալորի տեղական ջեմ՝ 1-ին տեսակի, տարայավորված համապատասխան սպասքում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 10 | Թեյ | ԳՕՍՏ 32573-2013 օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի՝ համապատասխան տարաներում կամ ինքնաեռում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 11 | Սուրճ աղացած | ԳՕՍՏ 32775-2014 Բնական բոված, դարչնագույն փոշի, հատիկների կեղևի ներառումով, համը դուրեկան, տարբեր երանգներով (թթու, դառը, տտիպ և այլն), բույրը նուրբ և վառ արտահայտված առանց կողմնակի համի և հոտի, օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի՝ համապատասխան տարաներում կամ ինքնաեռում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 12 | Կակաո | ԳՕՍՏ 108-2014 օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի՝ համապատասխան տարաներում կամ ինքնաեռում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 13 | Թթվասեր | ԳՕՍՏ 31452-2012: Տեխնիկական պայմանների համաձայն: Թարմ կովի կաթից, յուղայնությունը՝ 20 %-ից ոչ պակաս, թթվայնությունը՝ 65-100 ՕՏ, տարայավորված համապատասխան սպասքում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 14 | Կաթնաշոռ | ԳՕՍՏ 31452-2013: Տեխնիկական պայմանների համաձայն: Կաթնաշոռ 9,0% յուղի պարունակությամբ, թթվայնությունը՝ 210-240 ՕՏ, տարայավորված համապատասխան սպասքում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 15 | Ձու | ՀՍՏ 182-2012 Ձու 1-ին կարգի՝ սեղանի կամ դիետիկ: Պիտանելիության ժամկետի մեջ, խաշած, օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| | | I | | |
| 1 | Նրբերշիկ | ԳՕՍՏ Ռ52196-2011: Բարձր կամ I տեսակի, պատրաստված տավարի, խոզի մսերից: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, անհրաժեշտության դեպքում ճաշալցման գործընթացին մասնակցություն է ունենում սպասարկող աշխատակիցը |
| 2 | Լոլիկով ձվածեղ | Լոլիկ, ձու, թարմ կանաչ պղպեղ, կանաչի, համեմունք, կարագ | | |
| 3 | Նրբերշիկով ձվածեղ | Նրբերշիկ, ձու, թարմ կանաչ պղպեղ, կանաչի, համեմունք, կարագ | | |
| 4 | Երշիկով ձվածեղ | Երշիկ, ձու, թարմ կանաչ պղպեղ, կանաչի, համեմունք, կարագ | | |
| 5 | Կանաչ ոլոռով ձվածեղ | Կանաչ ոլոռ պահածոյացված, ձու, թարմ կանաչ պղպեղ, կանաչի, համեմունք, կարագ: | | |
| 6 | Հնդկաձավարի փլավ | Հնդկաձավար, կարագ, աղ | | |
| 7 | Մակարոնի փլավ | Մակարոն,կարագ,աղ | | |
| 8 | Բրնձով փլավ | Բրինձ,կարագ,աղ | | |
| 9 | Բլղուրի փլավ | Բլղուր,կարագ,աղ | | |
| 10 | Կարտոֆիլի պյուրե | Կարտոֆիլ, կարագ, աղ | | |
| 11 | Բլինի | Սոդա, կաթ, ալյուր, ձեթ, աղ | | |
| 12 | Բրնձով - ոսպով | Բրինձ, ոսպ, կարագ, աղ | | |
| 13 | Բրնձով - գազարով | Բրինձ, գազար, կարագ, աղ | | |
| 14 | Հաճարի փլավ | Հաճար, կարագ, աղ | | |
| 15 | Հաճարով -սնկով | Հաճար, սունկ, կարագ, աղ | | |
| 16 | Ոլոռի պյուրե | Ոլոռ, կարագ, աղ | | |
| 17 | Սիսեռի պյուրե | Սիսեռ, կարագ, աղ | | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 3 կերակրատեսակ, սակայն շաբաթական առնվազն 1 անգամ յուրաքանչյուր կերակրատեսակից | | | | |
| | | II | | |
| 1 | Մանրաձավարի շիլա | Մանրաձավար, կարագ, աղ | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, անհրաժեշտության դեպքում ճաշալցման գործընթացին մասնակցություն է ունենում սպասարկող աշխատակիցը |
| 2 | Կաթնով բրնձի | Շաքարավազ, կարագ, կաթ, բրինձ | | |
| 3 | Վարսակի շիլա | Վարսակի փաթիլներ, կարագ, աղ | | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 2 կերակրատեսակ, սակայն շաբաթական առնվազն 2 անգամ յուրաքանչյուր կերակրատեսակից | | | | |
| | | **Ճաշ** | | |
| **Սառը նախուտեստներ** | | | | |
| 1 | Աղցան մայրաքաղաքային | Տավարի թարմ միս, գազար, կանաչ ոլոռ, կարտոֆիլ, ձու, թթվասեր, մայոնեզ, թթու վարունգ, համեմունք, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2 | Աղցան վինեգրետ | Բազուկ, լոբի, կարտոֆիլ, թթու վարունգ, գազար, կանաչի, համեմունք, քացախ, բուսական յուղ, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 3 | Աղցան թաբուլե | Բլղուր, տոմատ, լոլիկ, համեմունք, բուսական յուղ, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 4 | Աղցան բազուկով | Բազուկ, թթվասեր, մայոնեզ, սամիթ, համեմունք, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 5 | Աղցան գազարով | Գազար, համեմունքներ, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 6 | Աղցան բանջարեղենային | Կաղամբ, գազար, ձեթ, թարմ կանաչի, քացախ, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 7 | Աղցան կաղամբով | Կաղամբ, գազար, ձեթ, թարմ կանաչի, կիտրոն, քացախ, համեմունք, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 8 | Աղցան կարտոֆիլով և վարունգով | Թթու վարունգ, կարտոֆիլ, սոխ, համեմուք, ձեթ, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| 9 | Աղցան սնկով | Սունկ, եգիպտացորեն, կարմիր-սև պղպեղ, աղ, մայոնեզ, սոխ, կանաչի, գազար, ափսեներով՝ ըստ նորմայի: | ըստ պահանջի | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 3 տեսակ, սակայն շաբաթական առնվազն 1 անգամ յուրաքանչյուր տեսակից | | | | |
| 10 | Թթու | Տեխնիկական պայմանների համաձայն: Տարբեր տեսակի (կաղամբ, վարունգ, լոլիկ և այլն) | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 11 | Լոլիկ | ԳՕՍՏ 1725-85 Լոլիկ թարմ օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | |
| 12 | Վարունգ | ԳՕՍՏ 1726-85 Վարունգ թարմ, օգտագործման տեսակի, անվտանգությունը՝ ըստ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 2 տեսակ, սակայն շաբաթական առնվազն 1 անգամ յուրաքանչյուր տեսակից | | | | |
| 13 | Երշիկ կիսաապխտած | ԳՕՍՏ 31785-2012 Երշիկ կիսաապխտած՝ պատրաստված տավարի և խոզի մսից, խոնավությունը ոչ ավելի քան 45%, յուղի զանգվածային մասը 41%-ից ոչ ավել, կտրտած ընդունելի չափսերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 14 | Բաստուրմա | ՀՍՏ 369-2015, տավարի մսից, կտրտած ընդունելի չափսերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | |
| 15 | Վետչինա | Վետչինա, ԳՕՍՏ 18236-85 համապատասխան, կտրտած ընդունելի չափսերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | |
| 16 | Ճարպ | Տեխնիկական պայմանների համաձայն: Աղ դրած, կտրտած ընդունելի չափսերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | |
| 17 | Ձեյթուն | ԳՕՍՏ 55464-2013 կանաչ կամ սև գույնի, տարայավորված համապատասխան սպասքում: | ըստ պահանջի | |
| 18 | Ֆիլե | Տեխնիկական պայմանների համաձայն: Ապխտած խոզի կամ տավարի փափկամիս, կտրտած ընդունելի չափսերով: Անվտանգությունը և մակնշումը ՄՄ ՏԿ N 021/2011, 034/2013 և 022/2011, <<Մթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 2 տեսակ, սակայն շաբաթական առնվազն 1 անգամ յուրաքանչյուր տեսակից | | | | |

| | | I | | |
|---|---|---|---|---|
| 1 | Լոբով ապուր | Լոբի, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, կանաչ տաքդեղ, լոլիկ, գազար, համեմունքներ, կանաչի | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, անհրաժեշտության դեպքում ճաշալցման գործընթացին մասնակցություն է ունենում սպասարկող աշխատակիցը կամ ըստ հաճախորդի պատվերի մատուցվում է մատուցողների միջոցով |
| 2 | Սիսեռով ապուր | Սիսեռ, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, լոլիկ, գազար, համեմունքներ, կանաչի, դափնու տերև | ըստ պահանջի | |
| 3 | Ոսպով ապուր | Ոսպ, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, կանաչ տաքդեղ, լոլիկ, համեմունքներ, կանաչի | ըստ պահանջի | |
| 4 | Ոլոռով ապուր | Ոլոռ, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, կանաչ տաքդեղ, լոլիկ, համեմունքներ, կանաչի, դափնու տերև | ըստ պահանջի | |
| 5 | Սպաս | Ցորենաձավար, կարագ, ալյուր, մածուն, ձու, աղ, սոխ, համեմունք, կանաչի | ըստ պահանջի | |
| 6 | Բորշչ | Կաղամբ, գազար, բազուկ, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, կանաչ տաքդեղ, աղ, լոլիկ, համեմունքներ, կանաչի, քացախ, դափնու տերև | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, անհրաժեշտության դեպքում ճաշալցման գործընթացին մասնակցություն է ունենում սպասարկող աշխատակիցը կամ ըստ հաճախորդի պատվերի մատուցվում է մատուցողների միջոցով |
| 7 | Բրինձով ապուր | Բրինձ, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, համեմունքներ, կանաչի | ըստ պահանջի | |
| 8 | Գարեձավարով ապուր | Գարեձավար, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, լոլիկ, համեմունքներ, կանաչի, դափնու տերև | ըստ պահանջի | |
| 9 | Մակարոնով ապուր | Մակարոն, կարագ, ալյուր, կարտոֆիլ, տոմատի մածուկ, սոխ, աղ, լոլիկ, համեմունքներ, կանաչի, դափնու տերև | ըստ պահանջի | |
| 10 | Աջաբսանդալ | Սմբուկ, կանաչ տաքդեղ, լոլիկ, սոխ, համեմունք, կանաչ լոբի, կարտոֆիլ, կանաչի, կարագ, սխտոր | ըստ պահանջի | |
| 11 | Սուպ խարչո | Բրինձ, ձավար, տավարի միս, կարտոֆիլ, սոխ, տոմատ, սխտոր, համեմունք, ձեթ | ըստ պահանջի | |
| 12 | Կանաչ լոբով ապուր | Կանաչ լոբի, կարտոֆիլ, գազար, արգանակ, սոխ, տոմատ, համեմուք, ձեթ | ըստ պահանջի | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 2 տեսակ, սակայն շաբաթական առնվազն 1 անգամ յուրաքանչյուր տեսակից | | | | |
| | | II | | |
| 1 | Հավի մսով վարդակներ | Հավի փափկամիս, ձու, կարագ, տոդա, ալյուր, տոմատի մածուկ, աղ, կարմիր-սև պղպեղ, դափնու տերև, ձեթ, արգանակ | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, անհրաժեշտության դեպքում ճաշալցման գործընթացին մասնակցություն է ունենում սպասարկող աշխատակիցը կամ ըստ հաճախորդի պատվերի մատուցվում է մատուցողների միջոցով |
| 2 | Հավի ռագու | Հավի միս, կարագ, ալյուր, աղ, կարմիր-սև պղպեղ, դափնու տերև, ձեթ, սոխ, կանաչի, արգանակ | ըստ պահանջի | |
| 3 | Գուլյաշ տավարի մսով | Տավարի միս, կարագ, դափնու տերև, կանաչի, ալյուր, տոմատի մածուկ, աղ, կարմիր-սև պղպեղ, թթվասեր, արգանակ | ըստ պահանջի | |
| 4 | Կոտլետ | Տավարի միս, կարագ, սոխ, հաց, կարագ, կանաչի, համեմունք | ըստ պահանջի | |
| 5 | Կոտլետ հավի | Հավի փափկամիս, կարագ, սոխ, կանաչի, համեմունք, սխտոր | ըստ պահանջի | |
| 6 | Խաշլամա | Տավարի միս, սոխ, կարագ, լոլիկ, կանաչի, համեմունք, դափնու տերև | ըստ պահանջի | |
| 7 | Խնկալի | Տավարի թարմ միս, ձու, սոխ, թարմ կանաչի, սխտոր, ալյուր, կարագ, համեմունք | ըստ պահանջի | |
| 8 | Մակարոն նավաստիական | Տավարի թարմ միս, սոխ, մակարոն, ձեթ, կարագ, համեմունք | ըստ պահանջի | |
| 9 | Դոլմա | Տավարի միս, բրինձ, սոխ, կաղամբ, տոմատ, կարագ, կանաչի, համեմունքներ | | |
| 10 | Ամառային դոլմա | Սմբուկ, կանաչ տաքդեղ, լոլիկ, սոխ, տոմատ, բրինձ համեմունք, կանաչի, կարագ | | |
| 11 | Գարնի յարեխ | Տավարի թարմ միս, կարագ, սոխ, թարմ կանաչի, սխտոր, ձեթ, համեմունք | | |
| 12 | Պելմենի | Տավարի թարմ միս, ձու, սոխ, թարմ կանաչի, սխտոր, ալյուր, կարագ, համեմունք | | |
| 13 | Հարիսա | Հավի միս, կարագ, ցորենաձավար | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14 | Բեֆ-ստրոգոնով | Տավարի միս, կարագ, տոմատ, թթվասեր, սոխ, համեմունք, կարտոֆիլ | | |
| 15 | Հավի մսով կիևակի | Հավի միս, կարագ, ձու, սոխ, սխտոր, պաքսիմատ, կանաչի | | |
| 16 | Չեխոբիլի հավի մսով | Հավի միս, կարագ, տոմատ, սոխ, համեմունք | | |
| Յուրաքանչյուր օր առնվազն 3 տեսակ, սակայն շաբաթական առնվազն 1 անգամ յուրաքանչյուր տեսակից | | | | |
| | | III | | |
| 1 | Հաց սև | ՀՍՏ 31-101 մինչև 500 գրամանոց կաղապարային, տեսակը՝ ռուսական բատոն, կտրտած՝ մինչև 50 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, ամեն օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 2 | Հաց մատնաքաշ | ՀՍՏ 31-99 Ցորենի բարձր տեսակի ալյուրից պատրաստված մինչև 1 կգ-ոց, կտրտած՝ մինչև 150 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, ամեն օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 3 | Լավաշ | ՀՍՏ 31-99 Ցորենի ալյուրից թողարկված կշռով և հատով, պատրաստված 1-ին տեսակի ալյուրից: Կտրտած 12*10սմ չափսերով՝ մինչև 50 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, ամեն օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| Թարմ միրգ | | | | |
| 4 | Միրգ | ԳՕՍՏ 21122-75 Խնձոր թարմ, պտղաբանական I խմբի, Հայաստանի տարբեր տեսակների, նեղ տրամագիծը 5 սմ-ից ոչ պակաս, սալոր, խաղող, ծիրան, գիլաս: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 5 | Ձմերուկ | Ձմերուկ, բուսաբանակ բոլոր տեսակների, կտրատված | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 6 | Սեխ | Սեխ 3 տեսակի՝ վաղահաս, միջին և ձմեռային, կտրատված | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 7 | Արևադարձային մրգեր | Բանան թարմ, նարինջ,մանդարին,կիտրոն պտղաբանական II խմբի (71-ից փոքր մինչև 63 մմ ներառյալ), կտրատված | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| Ըստ սեզոնայնության ամեն օր | | | | |
| 8 | Հանքային ջուր | ՀՍՏ 191-2000: 30/62 (հանքայնացումը 3,9-4,8 գ/դմ3) կամ 2/61 62 (հանքայնացումը 4,0-4,7 գ/դմ3), կամ 1/00 (հանքայնացումը 4,2-5,2 գ/դմ3), կամ 1/2001 (հանքայնացումը 3,2-4,7 գ/դմ3) հորատանցքից: Անվտանգությունը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2009թ. ապրիլի 30-ի N 491-Ն որոշմամբ հաստատված <<Շշալցված հանքային ջրերին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի>>, <<Սննդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի, <<Դիլիջան>> կամ համարժեք | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, ամեն օր |
| 9 | Մրգահյութ | Մրգահյութեր՝ պատրաստված թարմ մրգերից և պտուղներից, պտղամսով, շաքարի օշարակի հավելումով կամ առանց դրա, արտաքին տեսքով պարզ՝ նստվածքի զանգվածային մասը 0,2% ոչ ավելի և ոչ պարզ՝ 0,8% ոչ պակաս համապատասխան տարաներում | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, ամեն օր |
| 10 | Կոմպոտ՝ թարմ մրգերից | Միրգ, հատապտուղ, շաքարավազ, կիտրոն, համապատասխան տարաներում | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, շաբաթական առնվազն 2 անգամ |
| 11 | Մածնաբրդոշ | Մածուն, վարունգ, սամիթ, աղ, սառուց, համապատասխան տարաներում | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, շաբաթական առնվազն 2 անգամ |
| **Ընթրիք** | | | | |
| 1 | Շոգեխաշած կաղամբ | Կաղամբ, համեմունքներ, աղ, տոմատ, սոխ, գազար, կանաչի, քացախ, ձեթ | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, անհրաժեշտության դեպքում ճաշալցման գործընթացին մասնակցություն է |
| 2 | Կաթնով բրնձի | Շաքարավազ, կարագ, կաթ, բրինձ | ըստ պահանջի | |
| 3 | Կարտոֆիլի ֆրի | Կարտոֆիլ, ձեթ, համեմունք, աղ | ըստ պահանջի | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Տապակած կանաչ լոբի | Կանաչ լոբի, կարագ, սոխ, սխտոր, սամիթ, համեմունք, ձեթ | ըստ պահանջի | ունենում սպասարկող աշխատակիցը կամ ըստ հաճախորդի պատվերի մատուցվում է մատուցողների միջոցով |
| 5 | Խաշած ձուկ՝ իշխան | Ձուկ, համեմունք, դափնու տերև, կիտրոն, թարխուն | ըստ պահանջի | |
| 6 | Շնիցել-կարտոֆիլով՝ տապակած | Տավարի միս, կարագ, ձու, ալյուր, կարտոֆիլ, սոխ, կանաչի, ձեթ | ըստ պահանջի | |
| 7 | Կիսել մրգապտղային | Մրգային, օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի՝ համապատասխան տարաներում կամ ինքնաեռում: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով, ամեն օր |
| | | III | | |
| 1 | Հաց սև | ՀՍՏ 31-101 մինչև 500 գրամանոց կաղապարային, տեսակը՝ ռուսական բատոն, կտրտած՝ մինչև 50 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, յուրաքանչյուր օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 2 | Հաց մատնաքաշ | ՀՍՏ 31-99 Ցորենի բարձր տեսակի ալյուրից պատրաստված մինչև 1 կգ-ոց, կտրտած՝ մինչև 150 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, յուրաքանչյուր օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 3 | Լավաշ | ՀՍՏ 31-99 Ցորենի ալյուրից թողարկված կշռով և հատով, պատրաստված 1-ին տեսակի ալյուրից: Կտրտած 12*10սմ չափսերով՝ մինչև 50 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, յուրաքանչյուր օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 4 | Շաքարավազ | ԳՕՍՏ 33222-2015 Սպիտակ գույնի, սորուն, քաղցր, առանց կողմնակի համի և հոտի (ինչպես չոր վիճակում, այնպես էլ լուծույթում): Շաքարի լուծույթը պետք է լինի թափանցիկ, առանց չլուծված նստվածքի և կողմնակի խառնուկների, սախարոզի զանգվածային մասը՝ 99,75%-ից ոչ պակաս (չոր նյութի վրա հաշված), խոնավության զանգվածային մասը՝ 0,14%-ից ոչ ավել, ֆեռոխառնուկների զանգվածային մասը՝ 0,0003%-ից ոչ ավել: | ըստ պահանջի, յուրաքանչյուր օր | Մատուցվում է սեղաններին շաքարամաններով |
| 5 | Կարագ սերուցքային | ԳՕՍՏ-32261-2013: Քաղցրասերուցքային, յուղայնությունը՝ 82,5%, բարձր որակի, թարմ վիճակում, մինչև 25 կգ գործարանային փաթեթներով, կտրտած՝ մինչև 15 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, յուրաքանչյուր օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 6 | Պանիր | Տեխնիկական պայմանների համաձայն: Պանիր պինդ, կովի կաթից, աղաջրային, սպիտակից մինչև բաց դեղին գույնի, տարբեր մեծության և ձևի աչքերով: 46 % յուղայնությամբ, պիտանելիության ժամկետը ոչ պակաս քան 90%: 5կգ-ոց գործարանային փաթեթավորմամբ, <<Լոռի>> տեսակի կամ համարժեք, կտրտած՝ մինչև 15 գր-ոց կտորներով: | ըստ պահանջի, յուրաքանչյուր օր | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 7 | Թեյ | ԳՕՍՏ 32573-2013 օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի՝ համապատասխան տարաներում կամ ինքնաեռում: | | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 8 | Մածուն | ՀՍՏ 120-2005 Թարմ կովի կաթից, յուղայնությունը 3%-ից ոչ պակաս, թթվայնությունը 65-100 ՕՏ: Օգտագործման համար ընդունելի ջերմաստիճանի: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |
| 9 | Խմորեղեն | Տեխնիկական պայմանների համաձայն: Միջուկով և առանց միջուկի: Անվտանգությունը և մակնշումը՝ N 2-III-4,9-01-2003 (ՌԴ Սան Պին 2,3,2-1078-01) սանիտարահամաճարակային կանոնների և նորմերի և <<Մթնդամթերքի անվտանգության մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի: | ըստ պահանջի | Մատուցվում է ինքնասպասարկման եղանակով |

Կատարողը պարտավորվում է ապահովել ճաշարանախոհանոցային անհրաժեշտ սպասքով՝ օրական 200 մարդու հաշվարկով,որը պայմանագրի ավարտից հետո համարվում է Կատարողի սեփականությունը:

Կատարողը պարտավորվում է ծառայությունը մատուցել «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն» պետական հիմնարկի թվով 2 ճաշարաններում:

200 մարդու համար նախատեսված ճաշարանախոհանոցային էլ. սարքավորումները, սառնարանային տնտեսությունները, սեղաններն ու աթոռները տրամադրվում է Կատարողին անհատույց, պայմանով, որ այն հետ վերադարձվի ծառայության մատուցման վերջնաժամկետից հետո: Ծառայության մատուցման ընթացքում տրամադրված գույքի, էլ. սարքավորումների, սառնարանային տնտեսությունների սպասարկումը իրականացվում է Կատարողի կողմից և պայմանագրի ավարտից հետո աշխատանքային վիճակում հանձնվում է պատվիրատուին:

Կատարողի կողմից առաջարկած գինը իր մեջ ներառում է կոմունալ վճարները, ինչպես նաև տնտեսական և մաքրող նյութերի արժեքը:

| |
|---|
| Կատարողը պարտավորվում է ապահովել աշխատակիցների կազմն ըստ անհրաժեշտության՝ ապահովելով խոհարարական և սպասարկող անձնակազմով՝ համապատասխան հավաստագրերով: |
| Կերակրատեսակները պատրաստված պետք է լինեն բացառապես թարմ սննդամթերքից: |
| Կատարողը պարտավորվում է սննդի ծառայությունը մատուցել օրական 1-ից մինչև 200 հաճախորդի առկայության դեպքում: |
| Սահմանված պայմանների խախտման դեպքում Պատվիրատուն սահմանում է թերությունների վերացման ողջամիտ ժամկետ: Նշված ժամանակահատվածում թերությունները չվերացնելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծարել պայմանագիրը: |

## Ց Ա Ն Կ

## «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն» պետական հիմնարկում տրամադրվելիք նյութական միջոցների

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Քանակը |
|---|---|---|---|
| 1 | Պոպոկ ջարդիչ | հատ | 2 |
| 2 | Բլուդա փոքրծվածև | հատ | 6 |
| 3 | Բլուդա միջին ծվածև | հատ | 14 |
| 4 | Մրգի վազ բյուրեղյա | հատ | 68 |
| 5 | Ափսե ապակյա սուրսի | հատ | 30 |
| 6 | Ապակյա մրգաման | հատ | 74 |
| 7 | Ապակյա մրգաման պոչով | հատ | 13 |
| 8 | Հյութի բաժակ ապակյա | հատ | 178 |
| 9 | Գրդնակ փայտյա | հատ | 3 |
| 10 | Պատառաքաղ չ/պ | հատ | 713 |
| 11 | Գդալ սեղանի չ/պ | հատ | 397 |
| 12 | Գդալ թեյի չ/պ | հատ | 579 |
| 13 | Ջրաման ապակյա | հատ | 60 |
| 14 | Պատառաքաղ միս հանելու | հատ | 5 |
| 15 | Դանակ սեղանի չ/պ | հատ | 851 |
| 16 | Շերեփ խոհարարի մեծ չ/պ | հատ | 8 |
| 17 | Էլ հյութի քամիչ | հատ | 3 |
| 18 | Սալաթաման չ/պ | հատ | 1 |
| 19 | Բաժակ թեյի (Դյուրալեքս) | հատ | 30 |
| 20 | Բաժակ օղու | հատ | 200 |
| 21 | Բաժակ սուրճի ափսե | հատ | 66 |
| 22 | Ափսե դեսերտր 150մմ հաղճապակյա | հատ | 43 |
| 23 | Ափսե դեսերտր 24սմ հաղճապակյա | հատ | 120 |
| 24 | Ափսե դեսերտր 21սմ հաղճապակյա | հատ | 40 |
| 25 | Ափսե խորը հաղճապակյա | հատ | 150 |
| 26 | Ափսե խորը հաղճապակյա | հատ | 57 |
| 27 | Ափսե փոքր ճենապակյա | հատ | 113 |
| 28 | Հարմարանք ծուկ եփելու | հատ | 3 |
| 29 | Դանակ խոհարարի հիգ կտորանի | հատ | 2.1 |
| 30 | Քերիչ | հատ | 1 |
| 31 | Փլավքամիչ ալ | հատ | 3 |
| 32 | Թավա չուգունի տարբեր չափսերի | հատ | 9 |
| 33 | Կաթսաների կոմպլեկտ | հատ | 1 |
| 34 | Կաթսա 20լ ալ առ.կափարիչ | հատ | 1 |
| 35 | Կաթսա 8-10լ ալ առ.կափարիչ | հատ | 7 |
| 36 | Կաթսա 6-8 լ ալ առ.կափարիչ | հատ | 11 |
| 37 | Կաթսա 15 լ ալ առ.կափարիչ | հատ | 8 |
| 38 | Կաթսա 2-4 լ ալ առ.կափարիչ | հատ | 1 |

| | | | |
|---|---|---|---|
| 39 | Կաթսա ալ պոչավոր | հատ | 4 |
| 40 | Կաթսա չ/պ 20լ | հատ | 2 |
| 41 | Կաթսա չ/պ շոգեխաշ 30լ | հատ | 2 |
| 42 | Կաթսա ալ 30 լ կափարիչով | հատ | 4 |
| 43 | Կաթսա ալ 40 լ | հատ | 2 |
| 44 | Մասնատման տաժտակ պլաստմասե | հատ | 2 |
| 45 | Հացման փայտյա | հատ | 40 |
| 46 | Գդալ մեծ գարնիրի համար | հատ | 3 |
| 47 | Կոճղ | հատ | 2 |
| 48 | Կացին | հատ | 2 |
| 49 | Մսի խորտիկներ կտր. մեքենա BOSH MAS 9100 | հատ | 2 |
| 50 | Մսի խորտիկներ կտրելու մեքենա KR UPS-372 | հատ | 1 |
| 51 | Կոմբինացված աղաման պղպեղաման հաղճապ | հատ | 25 |
| 52 | Սառնարան կենցաղային (Ֆաբրիկյուս) | հատ | 1 |
| 53 | Ջրի տարողություն 1000լ | հատ | 1 |
| 54 | Տակդիր անձեռոցիկի հղճապակյա | հատ | 40 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

Լարս ՍՊԸ տնօրեն

Ա. ՊՐԱՉՅԱՆ

«ԼԱՐՍ» «ՍՊԸ» «LARS» 00118713

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Հ/հ | Անվանումը | Չ/մ | Գինը (դրամով) | Քանակը |
|---|---|---|---|---|
| 1 | սննդի պատրաստման ծառայություն /Սննդի պատրաստման ծառայություն/ | դրամ | 121,230,000 | |
| այդ թվում | | | | |
| | սննդի պատրաստման ծառայություն /Սննդի պատրաստման ծառայություն/ | մարդ/օր | 4390 | Յուրաքանչյուր օր, սննդի պատրաստման և մատուցման ծառայությունը պետք է իրականացվի «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն» պետական հիմնարկի հրամանատարի կողմից նախորդ օրը հաստատված կաթսայական բավարարման դրված հրամանի մարդ/օրերի վերաբերյալ քաղվածքի հիման վրա (ըստ հայտերի) |

**Ծանոթություն՝**

* **Մատուցվող ծառայության վայրը՝** ք.Դիլիջան, Կամոյի փողոց, Լեռնային Հայաստան առողջարան հասցեում:

** Ծառայությունը նախատեսվում է ձեռքբերել առավելագույնը 121 230 000 դրամի սահմաններում՝ 1-ին կիսամյակում, 3-րդ, 4-րդ եռամսյակներում:

*** Ծառայության մատուցումն իրականացվելու է ըստ պահանջարկի, պահանջարկից ավել չմատուցված ծառայությունը ենթակա է լուծարման:

**Հավելված N 2**
**ԲՄԾՁԲ-21-7/2-1 ծածկագրով**
**պայմանագրի**

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ դրամ**

| Գնման առարկայի | | | Նախատեսվում է ֆինանսավորել 2021թ ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 24.12.2021թ | | |
|---|---|---|---|---|---|
| չ/հ | անվանումը | CPV կոդը | 2-րդ եռամսյակ | 3-րդ եռամսյակ | 4-րդ եռամսյակ |
| 1 | սննդի պատրաստման ծառայություն /Սննդի պատրաստման ծառայություն/ | 55321100/1 | 60139100 | 90671100 | 121230000 |

**Ծանոթություն.**
- Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

**ԿԱՏԱՐՈՂ**

Լարս ՍՊԸ տնօրեն

ՊՐԱՉՅԱՆ

Հավելված N 3
ԲՄՇՁԲ-21-7/2-1 ծածկագրով
պայմանագրի

Պայմանագրի կողմ

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____
հհ_____
հվհհ_____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ**
**ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «  » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

**Հավելված N 3.1**
**ԲՄԾՁԲ-21-7/2-1 ծածկագրով**
**պայմանագրի**

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն